ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2016 թվականի N 45-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ և 68-րդ հոդվածներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի <<Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> N 202-Ն որոշմամբ հաստատված կարգը, որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2015 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժինների չափը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության փակ բաժնետիրական ընկերությունների տնօրեններին՝ մինչև 2016 թվականի հոկտեմբերի 1-ը, սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել շահութաբաժնի առկա պարտավորությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2016թ. մայիսի 20
ք.Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2016թ.մայիսի 20-ի N 45-Ա որոշման

ՑԱՆԿ

2015 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով ՀՀ 2016թ. պետական բյուջե շահութաբաժին վճարող փակ բաժնետիրական ընկերությունների

N	Ընկերության անվանումը	Վճարման ենթակա շահութաբաժնի գումարի չափը (հազ. դրամ)
1	«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	1263.0
2	«Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	81.7
3	«Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ	260.1
4	«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	585.0
5	«Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ	33.9
6	«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ	221.0
7	«Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ	73.0
8	«Տաթևի առողջության կենտրոն» ՓԲԸ*	104.4
9	«Վերիշենի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ*	4.0
10	«Դարբասի առողջության կենտրոն» ՓԲԸ*	8.5
11	«Անգեղակոթի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ*	10.0
12	«Նորաշենիկի ԱԱՊԿ» ՓԲԸ*	35.05
13	«Բոնակոթի ԱԱՊԿ» ՓԲԸ*	13.0
14	«Գորայքի ԱԱՊԿ» ՓԲԸ*	4.0
15	«Տեղի ԱԱՊԿ» ՓԲԸ*	24.5
16	«Շինուհայրի ԱԱՊԿ» ՓԲԸ*	23.5
17	«Խնձորեսկի ԱԱՊԿ» ՓԲԸ*	8.4

*ՀՀ կառավարության 2015 հունվարի 15-ի N 41-Ա որոշման
ընկերությունները վերակազմավորման ձևով վերակազմակերպել են պետական ոչ առևտրային կազմակերպությունների

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ *Գ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ*